նաւորութեանը ծառայող անհատներից մարմին կազմել և տօնը վայելուչ կերպով կատարել։

Կոչ ենք անում բոլոր ուղղափառ և անշահասէր մտաւորականներին չուտով գործի անցնել և արձագանք տալ Թեմիս Առաջնորդի կոչին ազգային պատիւը արտաւորել չթողնելու։

* * *

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆԻ ՏՕՆԱԿԱՐԳԸ

Ուղարկելով Ձեզ առաջիկայ Յօբելենական տօնի ծրագիրը, խնդրում եմ տպէք Ձեր լրագրում։

Մեսրոպ եպիսկոպոս

—o—

ԾՐԱԳԻՐ

1. *Հոկտեմբերի* 6-*ին* քաղաքիս բոլոր հայ եկեղեցիներում ս. պատարագից յետոյ կը լինին քարոզներ ազգային մեծ տօնի մասին։

2. *Հոկտեմբերի* 11-*ին* քաղաքիս բոլոր հայ դպրոցներում դասաւանդութիւնը աւարտւում է 3-րդ դասից յետոյ. ապա ուսուցիչները բացատրում են ամբողջ աշակերտութեան մեծ տօնի նշանակութիւնը.

3. *Հոկտեմբերի* 12-*ին* ս. Թարգմանչաց տօնին Վանաց աւագ եկեղեցում մատուցւում է ս. պատարագ քաղաքիս ամբողջ հոգևոր դասի ներկայութեամբ, պատարագիչն է Աշոտ եպիսկոպոսը։ Պատարագից յետոյ կը կատարուի հոգեհանգիստ Հայ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին։ Եկեղեցում ներկայ են լինելու քաղաքիս բոլոր հայ և պետական դպրոցների աշակերտութիւնը և հայ ուսուցչական դասը։ Հրաւիրւում են ներկայ լինել հայ ազգային և կուլտուրական հաստատութիւնները, հայ վաճառականութիւնը, արհեստաւոր դասը իր դրօշակներով և ամբողջ հայ ժողովուրդը։

4. Հայոց Դրամատիքական ընկերութեան նախաձեռնութեամբ Արտիստ. թատրոնում տեղի կունենայ ձրի ներկայացում հայ աշակերտութեան համար։

5. Երեկոյեան 8 ժամին Թիֆլիզի ժողովարանում տեղի կունենան տօնին նուիրուած դասախօսութիւններ։

6. *Հոկտեմբերի* 13-*ին* Վանաց աւագ եկեղեցում մատուցւում է ս. պատարագ ամբողջ հոգևոր դասի և վերոյիշեալ բոլոր հաստատութիւնների և ժողովրդի ներկայութեամբ։ Պատարագիչն է Թեմական Առաջնորդը։ Պատարագից յետոյ կը կատարուի Հայրապետական մաղթանք։

Ապա հանդէսը Վանքի աւագ եկեղեցուց եկեղեցական թափօրով կուղեորուի դէպի Ներսիսեան դպրոցի նոր շէնքը։

Դպրոցի դահլիճում հանդէսը բաց կանի Թեմի Առաջնորդը մի բանախօսութեամբ։

Հանդէսին հրաւիրուած են լինելու պետական և բարձրաստիճան պաշտօնեաներ և քաղաքիս բոլոր կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչներ։

Հրաւիրուած օտարազգի հիւրերի համար կը լինի բանախօսութիւն ռուսերէն լեզուով։

Հանդիսին կընդունուեն շնորհաւորութիւններ տօնի առիթով։

Դպրոցի հոգաբարձութիւնը ներկաներին կը հիւրասիրի թէյով։

7. Նոյն օրը երեկոյեան Թիֆլիզի ժողովարանի դահլիճում տեղի կունենայ բանկէտ։

8. *Հոկտեմբերի* 14-*ին* Արտիստիք թատրոնում երեկոյեան 8 ժամին լինելու է տօնին նուիրուած ներկայացում կենդանի պատկերներով։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«Դասաւանդական ձեւեր», Ա. գիրք, Գուրգէն Էդիլեանի։

—

Պ. Էդիլեանը շատ լաւ միտք էր յղացել, երբ որ հայերէն թարգմանեց իր գերմաներէն դիսէրտացիան— «Քննադատութիւն Ցիլլերի ձևական ատիճաններին», որոնք (ատիճանները) մեր մէջ արդէն կոտպաչութեան չափ սնոտիապաշտութիւն էին դառել, մեր կիսակիրթ մանկավարժների ձեռքում։

Իսկ եթէ Ցիլլերեան ձևական ատիճանները անընդունելի են, տեղն ինչ պէտք է դրուի։ Ահա այս հարցմունքի պատասխանը պիտի լինէին այժմ լոյս ընծայած «Դասաւանդական ձևերը»։ Բայց պէտք է ափսոսալով ասենք, որ որչափ «Քննադատութիւնը» մեր մանկավարժների աչքը բացանող մի ժամանակակից աշխատութիւն էր, այնքան «Դասաւանդական ձևերը» մշուշապատ մի գլուխգործք է։ Աւելի ևս պէտք է ափսոսալ, որ հեղինակը իր ոյժերը լաւ չչափեց և չփորձեց միայն պարզ թարգմանութիւնը տալու։ Զօրօրինակ, եթէ ամբողջովին թարգմանէր Սալվիւրկի «Die didaktischen Normalformen», որչափ աւելի օգուտ բերած պիտի լինէր, հարցմունքին պարզ և մէկին պատասխան տալով, քան որ նա դէսից-դէնից (Վունդտից, Մէսմէրից, Դէգէնէրէրից և ուրիշներից) ձիգ-ձիգ, բայց աղճատուած՝ կտորներ քաղելով, մի շատ դժուարատար կառուցում է ձևացրել, կամենալով հիմքի մէջ պճնազարդութեամբ դնել եգիպտական բուրգը, աջ թևին Ստրասբուրգի տաճարի մոտիվները, ձախ թևին Էյֆէլեան աշտարակի ատուերը, իսկ ամբողջութիւնից մի անգլուխ քարակոյտ գոյացնելով։

Ընթերցողը փոքր ինչ շունչ է քաշում, վերջին գրուխը կարդալով. այստեղ Էդիլեանը վերջապէս ձգտում է իր ասելիքները պարզել։ Եւ իրօք, պարզւում է, որ հեղինակը չփոթում է «ձևն» ու «մեթոդը», ուստի և այդպէս անհեթեթ գիրք է շարադրել։